ԵՂԵԳԻՍ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Յուրիկ Մկրտչյան

Հեռախոս՝ +37498.803.396

Բնակչություն՝ 441

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1372 հա, որից 157 հա քաղաքացիների սեփականության հողեր են, այդ թվում՝ 62 հա՝ տնամերձ, 95 հա՝ գյուղնշանակության հողեր։ Մնացած հողերը համայնքային են և 36 հա պետական սեփականության հողեր(արոտավայրեր, խոտհարքեր)։ Գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում։ Եղեգնաձոր քաղաքից գտնվում է մոտ 18 կմ հեռավարության վրա, Երևանից՝ 135կմ։ Գյուղի հիմնադրման մասին կոնկրետ տեղեկություններ չկան։ Այն փռված է Եղեգիս գետի ձախ ափի սարալանջին, ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1640մ։ Կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ։ Գյուղի զարգացման հեռանկարներն են՝ բնական հրաշալի տեսարանները, պատմամշակութային արժեք ներկայացնող բազմաթիվ վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, որոնք խթան կարող են հանդիսանալ տուրիզմի զարգացման համար։ Միջնադարյան Եղեգիսը Հայատասանի ամենահարուստ համայքներից է եղել։ 13-14 դարերում այն եղել է Օրբելյան իշխանական տոհմի նստավայրը։ Գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը կառուցվել է 1703թ. ավելի հին եկեղեցու ավերակների վրա, իսկ սուրբ Կարապետ, Զորաց եկեղեցիները 13-րդ դարի կառույցներ են։ Հատկանշական է, որ Զորաց եկեղեցում է կատարվել ռազմի դաշտ մեկնող զորքի երդման և օրհնության արարողությունները։ Գյուղի հարակից տարածքում հայտնաբերվել է 13-րդ դարի թվագրությամբ հրեական գերեզմանատուն։ 15-րդ դարում Լենկ Թեմուրի և այլ զավթողական արշավանքներից, այնուհետև երկրաշարժի հետևանքով ավերվել է քաղաքը։ Ավելի ուշ գյուղում բնակություն են հաստատել թուրքալեզու բնակիչներ և այն անվանել՝ <<Ալայազ>>։ 1988թ. Սումգայիթյան դեպքերից հետո գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներով։ Վերականգնվել է պատմական Եղեգիս բնակավայրի անվանումը։
Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ։
Գյուղն ունի դպրոց, բուժկետ, գրադարան։ Գյուղում գործում է քարի մշակման արտադրամաս։